

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

ԱՇԽԵՆ ԳԱԼՍՅԱՆ

Բանալի բառեր - օրենք, իրավունք, քննչական մարմին, նախաքննություն, անկախություն, ենթակայություն, երաշխիք, քննիչ, քրեական գործ, ոստիկանություն, դատախազություն, գերատեսչական շահեր:

Դարեր շարունակ Հայաստանը բաժանված էր Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև: 19-րդ դարի սկզբին Ռուս-Պարսկական պատերազմներն ավարտվեցին Ռուսաստանի հաղթանակով և 24.10.1813թ. Գյուլիստանի ու 21.02.1828թ. Թուրքմենչայի պայմանագրերով Հայաստանի առանձին տարածքներ դարձան ռուսահպատակ և կոչվեց Հայկական մարզ՝ Արևելյան Հայաստան: Այդ տարածքի մի մասի վրա ձևավորվեց երկրորդ, այնուհետև երրորդ անկախ Հայաստանի Հանրապետությունը:

Պատմականորեն Հայաստանի տարածքում մինչև 1918թ. մայիսի 28-ը գործել են Ցարական Ռուսաստանի օրենքներն ու քննչական տարածքային մարմիններն իրենց ենթակառուցվածքներով:

Մինչև 1860-ական թվականների դատական ռեֆորմը Ռուսաստանում քրեական գործերի քննությունն իրականացնում էր ոստիկանությունը: 1860թ. հունիսի 8-ին ընդունված օրենքով հիմնադրվեց դատական քննիչների ինստիտուտը: Սկզբնական շրջանում նրանց կոչում էին «քննչական գործերի պրիստավներ»: Կարճ ժամանակ անց նրանց կոչեցին դատական քննիչներ: Քննչական ենթակայությունն այդ ժամանակ որոշվում էր տերիտորիալ սկզբունքով, ըստ վարչատարածքային սահմանների, որոնք ուեզդներն էին, ուստի դատական քննիչները ձևավորվեցին օկրուգային դատարաններում:

1867թ. հոկտեմբերի 30-ին ընդունված օրենքով¹ Պետերբուրգ և Մոսկվա քաղաքներում ստեղծվեց դատական պալատներին առընթեր հատկապես կարևոր գործերով քննիչների ինստիտուտը: Որոշ ժամանակ անց նման պաշտոններ ձևավորվեցին նաև Ռուսաստանի այլ խոշոր քաղաքներում, յուրաքանչյուր օկրուգային դատարաններում հաստատվեց նաև կարևորագույն գործերով քննիչի հաստիք²:

¹ Полное собрание законов Российской империи. Собрание 2-е. СПб., 1871. Т. 42, отд. 2. С. 258.

² Полное собрание законов Российской империи. Собрание 2-е. СПб., 1874. Т. 45, отд. 1. С. 607.

Գեղարվեստական գրականության մեջ, ռուս մեծ իրավաբան և դատական գործիչ Ա.Ֆ.Կոնիի գրվածքներում¹, դատախազների, ատենակալների հիշողություններում հիշատակվում են հսկայածավալ թերություններ, որոնք առկա էին այդ տարիների քննչական աշխատանքներում: Համեմատելով դրանք ներկայիս քննչական աշխատանքներում տեղ գտած թերությունների և բացթողումների հետ ոմանք կարելի է նույնականացնել: Դրանք են քաշքշուկները, քննչական գործողությունները ոչ ժամանակին կատարելը, անհրաժեշտ փորձաքննությունները չնշանակելը և այլն:

Նույնանման քննչական համակարգ գործում էր նաև Յարական Ռուսաստանի մաս կազմող ներկայիս Հայաստանյան տարածքներում:

1918թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի առաջին անկախ հանրապետությունը, որը նաև իրավական համակարգ ձևավորելու գերիսնդիք ուներ:

Հայաստանի իշխանություններն ունեին երկու ճանապարհ. ստեղծել նոր դատարաններ և կառուցել նոր դատական համակարգ կամ հարմարեցնել մինչ այդ գործող դատական համակարգը հանրապետության իրավական պահանջումներին, նոր հանրապետության իրավահարաբերություններին:

Հայաստանի խորհուրդը և կառավարությունն անվերապահորեն գնացին ռուսական օրենսդրության և ռուսական դատական, դատախազական և քննչական համակարգի փոխառության (ռեցեպցիա):

Հայաստանի խորհուրդը 1918թ. դեկտեմբերի 6-ին ընդունեց օրենք «Հայաստանի Հանրապետության մեջ հաշտարար բաժանմունքների և քննչական մասերի վերակազմության և նորմերի բացման մասին»: Նույն օրը Հայաստանի խորհուրդը ընդունեց օրենք «Նախկին ռուսական կայսրության օրենքները Հայաստանի հանրապետության տարածքի վրա գործադրելու մասին»: Այս օրենքի համաձայն Հայաստանի հանրապետությունում գործելու էին ռուսական քրեական-դատավարական օրենքները, ընդհանուր ընդդատության քրեական գործերի նախաքննությունը կատարում էին շրջանային դատարանների դատական քննիչները՝ միլիցիայի օժանդակությամբ: Նրանց կողմից գործերի քննության վրա հսկողություն էին իրականացնում դատախազները: Քայլեր էին արվում նախաքննությունը դատական համակարգից և նրա ազդեցությունից անջատելու և անկախ պահելու ուղղությամբ:

Հոկտեմբերյան հեղափոխությունը 1917թ. ոչնչացրեց դատական պետական մեխանիզմները՝ ստեղծելով պրոլետարիատի դիկտատուրա, ներդնելով կազմակերպական և գործունեության նոր սկզբունքներ:

¹ **Кони А.Ф.** Судебные следователи // Собрание сочинений. М., 1966.

Այդ ժամանակահատվածում հիմնադրվեց «Սովետական արդարադատությունը» և սկսվեց ձևավորվել նոր քննչական ապարատը: Քննությունը վարում էին այսպես կոչված քննչական հանձնաժողովները, որոնք կոլեգիալ մարմիններ էին:

1917թ. նոյեմբերի 24-ի դատարանների մասին №1 դեկրետով վերացվեց դատական քննիչների ինստիտուտը և ասված էր, որ քրեական գործերի նախաքննությունը դրվում է տեղական դատավորների վրա միանձնյա, ընդ որում նրանց կողմից կայացված անձին ձերբակալելու և դատի տալու որոշումները պետք է հաստատվեին տեղական դատարանի ողջ կազմով:

Նույն դեկրետում նշվում էր, որ հեղափոխական տրիբունալներին ընդդատյա քրեական գործերը պետք է քննեն խորհուրդներին առընթեր ձևավորվող հատուկ քննչական կոմիտեները: Ասվում էր նաև, որ բոլոր գործող քննչական կառույցները վերանում են և ստեղծվում են խորհուրդներին առընթեր քննչական հանձնաժողովներ, որոնց էլ փոխանցվում է քրեական գործերի նախաքննությունը¹:

1920թ. հունիսին տեղի ունեցավ արդարադատության ոլորտի գործիչների համագումար, որը կտրականապես դեմ արտահայտվեց նախաքննության կոլեգիալությանը, ուստի որոշում կայացվեց քննչական հանձնաժողովների վերացման և անհատական սկզբունքով քննություն կատարող քննչական մարմիններ ձևավորելու նպատակահարմարության մասին:

1920թ. օգոստոսի 21-ին սկսեց գործել Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի հրահանգը «Արդարադատության տեղական մարմինների մասին», իսկ նույն թվականի հոկտեմբերի 21-ին համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն (ՀԿԳԿ) ներդրեց ժողովրդական դատարանների խորհուրդներին առընթեր ժողովրդական քննիչների համակարգը, որը բաղկացած էր նաև արդարադատության բաժիններին առընթեր կարևորագույն գործերով հատուկ քննիչներից և կարևորագույն գործերով քննիչներից՝ Արդարադատության ժողովրդական կոմիտեին առընթեր:

1922թ. մայիսին ձևավորվեց սովետական դատախազությունը, որի լիազորություններից էր նաև նախաքննության նկատմամբ հսկողությունը: Դրա աստիճանական զարգացումը հանգեցրեց քննչական և դատախազական մարմինների միաձուլմանը: Ինչպես դեկավար դիրեկտիվներում, այնպես էլ գործնականում պահանջ էր դրվում դատախազների և քննիչների միջև անմիջական կապի հաստատման՝ այդ գործառույթները դիտարկելով որպես մի շղթայի օղակներ և դա կատարեց իր պատմական առաքելությունը: 1928թ. սեպտեմբերի 3-ին ՀԿԳԿ-ն փոփոխեց դատավա-

¹ История России. 1917 - 1940. Хрестоматия / Сост. В.А. Мазур и др.; под редакцией М. Е. Глазачкова. Екатеринбург, 1993

րության մասին օրենքը և քննչական ապարատն ամբողջությամբ դատական մարմիններից փոխանցվեց դատախազություն:

Համանման փոփոխություններ կատարվեցին նաև մյուս խորհրդային հանրապետությունների օրենսդրություններում:

Այդ ժամանակահատվածում քննիչներից պահանջվում էր անզիջում պայքար մղել հակահեղափոխական մնացորդների և բոլոր տեսակի թշնամիների, ինչպես նաև պետական ու սոցիալիստական սեփականության դեմ ոտնձգող «գողերի ու գավթիչների» նկատմամբ:

Քննիչներն ակտիվորեն իրենց քննած քրեական գործերով, բացահայտումներով զգալիորեն նպաստում էին սոցիալիստական հասարակարգի կառուցմանն ուղղված քրեական քաղաքականության իրականացմանը:

1933թ. ԽՍՀՄ դատախազության հիմնադրումից հետո քննչական ապարատն առավել կայունացավ և համալրվեց համապատասխան հաստիքներով և նյութատեխնիկական ապահովմամբ: Վերջնականապես և՛ օրենսդրորեն, և՛ գործնականում բոլորի կողմից ընդունվեց, որ քննիչն ինքնուրույն դատավարական անձ է, իր իրավունքներով և պարտականություններով համարվում է ծանրակշիռ պետական պաշտոնյա:

1936թ. ստեղծվեցին ԽՍՀՄ դատախազության և միութենական հանրապետությունների դատախազությունների քննչական առանձին ստորաբաժանումները: Միևնույն ժամանակ ստեղծվեց նաև ՀԽՍՀ դատախազության քննչական ապարատը:

Այդ ստորաբաժանումների վրա էր դրված նախաքննության ղեկավարումը, կազմակերպումը, քննչական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը:

Նրանք պարտավոր էին իրենց առջև դրված խնդիրները լուծելիս երբեք չնոռանալ, որ ոչ միայն պետական, այլ նախևառաջ քաղաքական գործիչներ են, ուստի յուրաքանչյուր գործ քննելիս և որոշումներ կայացնելիս առաջնային էր համարվում պետական շահի պաշտպանությունը: Հատուկ շեշտվում էր, որ քննիչի մասնագիտությունը պատվավոր է և ստեղծագործական, և որ քննությունը բարդ արվեստ է: Պահանջվում էր, որ քննիչը հետևողականորեն բարձրացնի իր քաղաքական և գաղափարական մակարդակը, համապատասխան Մարքսիզմ-Լենինիզմի ուսմունքի և երբեք չնոռանա, որ ինքը քաղաքական գործիչ է: Քննություն կատարելը համեմատվում էր պատերազմելու հետ և պահանջվում էր մեծ հմտություն և արվեստ:

ԽՍՀՄ ժամանակահատվածում նախաքննական մարմինները, հաշվի առնելով կոմունիստական գաղափարախոսությունը, այնուամենայնիվ որոշակի զարգացումներ ապրեցին: Այդ ընթացքում նախաքննական մարմիններն իրենց առանձնահատուկ դերն ունեին դատախազական մարմիններում:

Երբ նախաքննությունը կատարվում էր նաև դատախազական մարմիններում, գերատեսչական մոտեցումների և շահերի դրսևորումները ինչոր չափով հետին պլան էին մղվում, որովհետև դատախազներն օգտագործելով իրենց լիազորությունները և, մասնավորապես մի մարմին ընդդառյա քրեական գործերը մեկ ուրիշի փոխանցելով, կարողանում էին կանխել նման երևույթները: Այս առումով հարկ է նշել, որ դատախազներն իրենք նույնպես օժտված էին նախաքննություն կատարելու լիազորությամբ:

ՀՀ Սահմանադրության 103 հոդվածում սպառիչ թվարկված էին դատախազության լիազորությունները և նախատեսված չէր նախաքննության գործառույթը: 2007թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ դատախազության մասին ՀՀ օրենքը նույնպես բացառեց այդ գործառույթի իրականացումը դատախազական մարմիններում, ուստի և փոխվեց քրեական գործերի քննչական ենթակայությունը ռստիկանության համակարգում և ձևավորվեցին նախաքննության իրականացնող նոր մարմիններ՝ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համակարգում:

2007թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով ձևավորվեց նոր նախաքննական մարմին՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը¹:

Նախաքննության կատարման գործառույթը դատախազության մարմիններից դուրս բերելը հանգեցրեց նրան, որ Հայաստանում քննչական մարմինները դարձան լոկ գերատեսչական ենթակառուցվածքներ: Դրանք էին գլխավոր քննչական վարչությունը՝ տեղերում իր վարչություններով և բաժիններով ՀՀ ռստիկանության համակարգում, Զինվորական քննչական վարչությունը ՀՀ պաշտպանության նախարարությունում գորամասի կարգավիճակով, քննչական վարչությունը ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում և քննչական վարչությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեում:

Միայն ՀՀ հատուկ քննչական ծառայությունն էր, որ համարվում էր անկախ քննչական մարմին, քանզի չէր գտնվում որևէ գերատեսչության կազմի մեջ և նախաքննություն էր իրականացնում միայն հատուկ սուբյեկտների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, ինչը չնչին տոկոս էր կազմում հանցագործությունների շարժակազմում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածը² նախատեսում էր քննչական ենթակայությունը, ըստ քրեական օրենսգրքի հա-

¹ «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 28.11.2007թ.// <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121540>

² ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 190, 22.02.2007թ. խմբագրությամբ

մապատասխան հողվածների: Նման ենթակայության տրամաբանությունը կայանում էր նրանում, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված և զինվորականների կողմից կատարված հանցագործությունները քննում էին պաշտպանության նախարարության քննիչները, ազգային անվտանգությանը վերաբերող և առնչվող հանցագործությունները՝ ՀՀ ԱԱԾ-ի քննիչները, հարկային և մաքսային հանցագործությունները՝ ՀՀ ՊԵԿ-ի քննիչները: Մնացած բոլոր հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը քննվում էին ՀՀ ոստիկանության քննիչների կողմից:

Դժվար չէ նկատել, որ ակնհայտորեն բացակայում էին քննիչների անկախության և ինքնուրույնության մասին օրենքով նախատեսված երաշխիքները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով միևնույն իրավասություններով օժտված և նույն կարգավիճակ ունեցող քննիչները գտնվելով տարբեր գերատեսչություններում, փաստացի ունեին տարատեսակ իրավական, կազմակերպական, նույնիսկ սոցիալական հնարավորություններ, ինչը բնականաբար մի շարք բացասական հետևանքներ էր ունենում մինչդեռատական վարույթի իրականացման ընթացքում: Բացակայում էր այդ համակարգերում գործող իրավական ակտերի ներքին տրամաբանական համաձայնությունը, դրանց փոխկապակցվածությունը և ողջ համակարգի միասնությունը: Հաճախ ընդունվող գերատեսչական ակտերի բովանդակությունը ոչ համարժեք էր արտահայտում քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգերն ու խնդիրները՝ արտահայտելով համակարգի և նույնիսկ խմբային շահերը: Ակնհայտ է, որ այդ պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել քննիչի անկախության և քրեական գործերի օբյեկտիվ վարույթի մասին: Բնականաբար քննիչների վարչակառավարչական ղեկավարությունը բացահայտ հնարավորություն ուներ միջամտել և ազդել քրեական գործերով դատավարական որոշումներ կայացնելու ընթացքում: Այդ ժամանակահատվածում միակ արտագերատեսչական մարմինը, որ ձևավորվեց դա ՀՀ հատուկ քննչական ծառայությունն էր:

Այս ամենը հետևանք էր նաև պետության համապատասխան իրավաստեղծ գործունեության, ոչ ծրագրային, ոչ նպատակամղված և գիտականորեն ու գործնականորեն չհիմնավորված աշխատանքի:

2013թ. սեպտեմբերին ՀՀ քննչական կոմիտեի իրավական կարգավորման մասին օրենքների և այլ իրավական նորմերի մշակումը ենթադրում էր գիտական, ստեղծագործական և, որ անչափ կարևոր է, գործնական մոտեցում: Անհրաժեշտ էր հաղթահարել պետական համակարգի առանձին պաշտոնակատար անձանց քմահաճ և նիհիլիստական վերաբերմունքը, ինչը զգալի խոչընդոտների հանգեցրեց:

Դեռևս ԽՍՀՄ տարիներից խոսվել է միասնական քննչական ապարատ ստեղծելու անհրաժեշտության մասին, քանի որ նույնիսկ կոմունիստական գաղափարախոսությամբ պետության մեջ զգացվում էր անկախ նախաքննական մարմին ունենալու անհրաժեշտությունը, սակայն հենց կոմունիստական գաղափարախոսությունն էլ զգուշավորություն էր ներշնչում իշխող կուսակցության շրջանակներում՝ թույլ չտալով իրենց գնալ այդպիսի շքեղության:

Հայաստանի Հանրապետության հանրային կյանքում 20-րդ հարյուրամյակի վերջին սկսված արմատական փոփոխությունները բնական եղանակով ազդեցին ողջ պետական ինստիտուտների վրա:

Անկախությունը հնարավորություն տվեց ժողովրդավարական, իրավական պետություն և քաղաքացիական հանրություն կառուցել, սակայն միայն քաղաքական կարգի փոփոխությունը դեռ բավական չէր, որպեսզի պետությունը գնար այդպիսի կարևորագույն քայլի, ինչպիսին էր նախաքննական մարմինների անկախությունը: Այս ընթացքում էր, որ իրավաբան-գիտնականների և պրակտիկ իրավաբանների շրջանում կրկին բարձրացվեց միասնական քննչական մարմին ունենալու գաղափարը, քանի որ մի կողմից կարելի է փաստել իրավապահ մարմինների կառուցվածի և գործառույթների (իրավասության) փոփոխման օբյեկտիվ հնարավորությունը և անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ հանրության կյանքում դրանց դերի աճը: Հաշվի առնելով, որ իրավական, ժողովրդավարական հանրապետությունում իրավապահ մարմինները պետք է գերծ լինեն կանխակալությունից և ավելորդ ճնշողականությունից, ի հայտ էր եկել գերանհրաժեշտություն դրանք համակողմանիորեն բարեփոխել: Նոր քննչական մարմնի ստեղծման իրավական կարգավորման, իրավասության, գործունեության կազմակերպման, գործող նախաքննական մարմինների կարգավիճակի ընդհանուր ուսումնասիրության անհրաժեշտության, ինչպես նաև առկա խնդիրները լուծելու հարցերը պահանջում էին անկախ հետազոտություններ ինչպես գիտնականների, այնպես էլ պրակտիկ աշխատողների կողմից:

Մասնավորապես Ռուսաստանի Դաշնության ՆԳ նախարարության քննչական դեպարտամենտի ղեկավար Ն.Սոլովյովը քննչական մարմինների ռեֆորմը հանգեցնում է նրան, որ պահպանելով նախաքննությունը դատախազությունում և ազգային անվտանգության մարմիններում, պետք է դիտարկել ներքին գործերի հետաքննչական և նախաքննական ապարատների իրավասություններն ու քննչական ենթակայությունը:¹

¹ Н. Соловьев. Реформа следственного аппарата: от перераспределения подследственности до модернизации УК. «Российская юстиция», 2000 №12

ՀՀ ՆԳ գլխավոր վարչության նախկին պետ Կ.Խ.Պետրոսյանն իրավափոխումն համոզմունք հայտնելով, որ դատախազությունից քննչական գործառույթները պետք է դուրս բերվեն, դարձյալ նեղ գերատեսչական շահերից ելնելով նշում է. «Անկասկած այդպիսի մարմին (նկատի ունի միացյալ քննչական մարմին) կարելի է ստեղծել ներքին գործերի մարմինների քննչական ապարատի բազայի վրա, քանի որ այն միակ կառույցն է, որը պատրաստ է իր վրա վերցնել նախաքննության ողջ պատասխանատվությունը»¹: Այնուհետև Կ.Խ.Պետրոսյանն իր աշխատության մեջ բերելով Ղազախստանի Հանրապետության օրինակը հանգում է այն եզրակացության, որ այնտեղ միացյալ քննչական ապարատի ստեղծումը չհաջողվեց այն պատճառով, որ «հատկապես կանոնակարգված չի եղել օպերատիվ-քննչական ապարատի և ներքին գործերի մարմինների փոխհարաբերությունները»²:

Առաջին անգամ նոր պայմաններում միասնական քննչական մարմնի ստեղծման գաղափարը բարձրաձայնվել է Հայաստանի Հանրապետությունում միասնական քննչական մարմնի օրինագծի ստեղծման աշխատանքային խմբի ղեկավար Ա.Հովսեփյանի կողմից 2013թ.³: Մինչ այդ միասնական քննչական մարմնի ստեղծման անհրաժեշտությունը քննարկման առարկա է եղել ինչպես գիտական, այնպես էլ իրավակիրառ շրջանակներում: Օրինագծում նախատեսվում էր, որ նորաստեղծ մարմնում միավորվելու են Հայաստանի Հանրապետության ԱԱԾ, ՊԵԿ, ՊՆ և ոստիկանության քննչական ստորաբաժանումները: Մակայն Հայաստանի Հանրապետության իրավապահ համակարգում նման հսկայական փոփոխություններն աջակցություն չստացան:

Գոյություն ունեցող բոլոր քննչական ստորաբաժանումները մեկ միասնական մարմնում միավորելու գաղափարի հակառակորդների փաստարկներից մեկը կայանում էր նաև քրեական գործերի քննության ժամանակ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների արտահոսքի կանխումը, հաշվի առնելով սահմանադրական կարգի և պետական շահերի դեմ ուղղված հանցագործությունների քննության գործառույթների փոխանցման անհնարինությունը, ինչն այնքան էլ համոզիչ չէ, քանի որ ներկայումս հափշտակությունների, կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես նաև պաշտոնեական լիազորությունե-

¹ Կ. Խ. Պետրոսյան «Նախաքննության գիտական կազմակերպման հիմնահարցեր», Երևան, 2001, էջ 7

² Կ. Խ. Պետրոսյան «Նախաքննության գիտական կազմակերպման հիմնահարցեր», Երևան, 2001, էջեր 305-306

³ Երևան, ՀՀ նախագահի 24.09.2013թ. ՆԿ-159-Ա կարգադրությունը <https://www.president.am/hy/Directives/item/975/>

րի հետ կապված հանրորեն վտանգավոր արարքների վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքում քննչական կոմիտեի քննիչները ևս առնչվում են պետական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ: Քրեական դատավարության օրենսդրությունը նախատեսում է մեխանիզմ, որը թույլ է տալիս ապահովել պետական գաղտնիքի ռեժիմի պահպանությունն ինչպես քրեական գործերի նախաքննության, այնպես էլ դատաքննության փուլում: Բացի այդ՝ առանձնացված քննչական ստորաբաժանումների կողմից պետական գաղտնիք պարունակող քրեական գործերն ընդդատյա են ընդհանուր իրավասության դատարաններին, որն է մասնագիտացված դատարան պետական գաղտնիք պարունակող քրեական գործերի քննության համար Հայաստանում գոյություն չունի: Մակայն դա չի խանգարում նշված տեղեկությունների ամբողջականությունն ապահովել և թույլ չտալ դրանց տարածումը:

Հայաստանի Հանրապետության բոլոր նախաքննական մարմինների գործունեության վերափոխման հարցերի քննարկումը, ինչպես նաև ի վերջո մեկ միասնական քննչական մարմնի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսումնասիրել հայրենական քննչական մարմինների ստեղծման և զարգացման պատմությունը, ինչպես նաև նշված մարմիններում և ողջ դատավարության ընթացքում քննիչի դերի սահմանումը:

Պատմականորեն այնպես է դասավորվել, որ բավականին շատ հեղինակներ, ինչպես տեսաբաններ, այնպես էլ պրակտիկներ, անդրադարձել են մեկ պետության ողջ տարածքում կատարվող բոլոր տեսակի հանցագործություններ քննող միասնական պետական գերատեսչության ստեղծման գաղափարին: Այսպես՝ դեռևս 1957թ. ռուս հայտնի իրավագետ Մ.Ս.Ստրոգովիչը մատնանշել է ոստիկանության՝ միաժամանակ որպես հետաքննչական և նախաքննական մարմնի գոյության անթույլատրելիությունը¹:

Այսպիսով 2014թ. ի վերջո հաջողվեց ստեղծել ՀՀ քննչական կոմիտեն, սակայն, տարբեր գերատեսչական շահերից ելնելով, նշված կառույցում հաջողվեց ընդգրկել միայն ՀՀ ոստիկանության և ՊՆ քննչական մարմինները: Երկար քննարկումների արդյունքում այդ կառույցից դուրս մնացին պետական եկամուտների կոմիտեի և ԱԱԾ քննչական մարմինները, ինչպես նաև ՀՀ հատուկ քննչական ծառայությունը:

Պատճառաբանվեց, որ պետական եկամուտների կազմից քննչական մարմնի դուրս բերումը բացասաբար կանդրադառնա պետական եկամուտների հավաքագրման վրա, որովհետև համարվում է, որ քննչական գործառույթը յուրահատուկ գործիք է հարկատուների վրա ճնշում գործադրելու և հարկահավաքման գործընթացն ապահովելու համար: Փաս-

¹ **Строгович М. С.** О дознании и предварительном следствии и о «едином следственном аппарате» // Социалистическая законность. 1957. N 5. С. 21.

տորեն այդ գերատեսչական շահը գերադասվեց քննիչների ինքնուրույնության և անկախության սկզբունքից, նախաքննության օբյեկտիվության և անկողմնակալության ապահովման, արդարադատությանն օժանդակելու արդյունավետության անհրաժեշտությունից:

ԱԱԾ-ի քննչական ծառայությունը նույնպես մնաց նույն համակարգում՝ նկատի ունենալով այնտեղ քննվող քրեական գործերի առանձնահատկություններն ու օպերատիվ ծառայությունների հետ սերտ կապի անհրաժեշտությունը:

Նշված բացառություններով հանդերձ ՀՀ քննչական կոմիտեի ձևավորումը Հայաստանի իրավական համակարգի համար մեծ առաջընթաց էր և ՀՀ նախաքննության օրինականության համար բացարձակ հաջողություն:

Ճիշտ է ներկայումս ՀՀ-ում նախաքննություն են իրականացնում քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների քննիչները, սակայն միավորման սկիզբն աներկբա դրված է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով¹ ըստ հոդվածների կանոնակարգվում է քննչական ենթակայությունը և դրա հիման վրա էլ նախաքննական մարմիններն իրականացնում են իրենց գործունեությունը: Առաջին հայացքից կարող է այս բաժանումն արդարացված համարվել, սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրել, որ նախաքննական մարմինների բաժանումը չի բխում ՀՀ քրեական դատավարության սկզբունքներից: Այն է.

Հոդված 17. Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Համաձայնեք շատ դժվար է հետաքննչական մարմնի կազմում գործող քննչական մարմնի համար անընդմեջ հետևել այս կանոնին, երբ դրանք հակասում են գերատեսչական շահերին, քանի որ առկա է հիմնավոր կասկած առ այն, որ հետաքննության մարմնի թերությունները կարող են թաքցվել միննույն մարմնի կազմում, քանի որ նախաքննություն իրականացնող մարմնի աշխատակիցը հասկանում է, որ իր առաջխաղացումը, պարզավճարները կախված են գերատեսչության ղեկավարից:

¹ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150022>

Այսպիսով՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննություն իրականացնելու համար պետք է լինի անկախ քննչական մարմին, որը պետք է օժտված լինի իր աշխատակիցների աշխատանքն ինքնուրույն գնահատելու հնարավորությամբ:

Այստեղ հարկ է նաև նշել, որ մեկ միասնական մարմնի առկայության դեպքում նաև հնարավորություն կա կրճատել ուռճացված քննչական ապարատները, երբ մեկ քննիչի վրա հսկողություն է իրականացնում մոտ 10 պաշտոնյա, սա իր հերթին նույնպես կարժնորի քննիչի պաշտոնական դիրքը և նրա պատասխանատվությունը:

Միասնական քննչական մարմնի ստեղծումն ի վերջո ամբողջովին կանկախացնի նախաքննական մարմինը և կողմերի միջև մրցակցությունը կդարձնի ավելի արդյունավետ, ինչը վկայում են ներկայիս նախաքննության որակի բարելավման արդյունքները, երբ դրանք համեմատության մեջ են դրվում նախկին՝ ռստիկանության և ՊՆ քննչական աշխատանքի ցուցանիշների հետ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պահանջն այն է, որ հասարակության համար ակնհայտորեն ընկալելի պետք է լինի արդարադատության, ինչպես նաև արդարադատությանն օժանդակող մարմինների գործունեության անկախության և օբյեկտիվության սկզբունքների պահպանման և իրականացման իրական պայմանները, երաշխիքները (տես Sander v. The United Kingdom, 2000թ. մայիսի 9-ի վճիռ, գանգատ թիվ 34129/96, կետ 22¹), այնինչ ինչպես հիմնավորել ենք գերատեսչական քննիչների գործունեությունն ակնհայտորեն գերատեսչական շահերի դրսևորումներ է կրում:

Անհրաժեշտ է, որ հանրությունը համոզված լինի, նրանց համար պետք է հստակ տեսանելի լինի, պետք է երևա նախաքննության օբյեկտիվությունն ու անկախությունը բոլոր տեսակի շահերից՝ բացի արդարադատության իրականացման բարձրագույն շահը:

Ашкен Галстян, Сравнительный обзор новейшей истории следственных органов Армении - В данной статье приводится краткий сравнительный анализ образования, становления и исторического развития органов предварительного следствия современного периода в Армении. Обосновано необходимость создания единого следственного органа в Армении как одной из основных гарантий независимости и самостоятельности следователей. Объясняется необходимость выведения следственных

¹ <https://hudoc.echr.coe.int/eng#%22fulltext%22:%222234129/96%22,%22documentcollectionid%22:%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22,%22itemid%22:%222001-58835%22>

органов Республики Армения из-под ведомственной власти в свете решений Европейского суда по правам человека.

Ashkhen Galstyan, Comparative review of recent history of the investigative authorities of Armenia - This article provides a brief comparative analysis of the emergence, formation and historical development of the preliminary investigation authorities of the modern period of history in Armenia. The necessity of establishing a single investigative body in Armenia is justified as one of the main guarantees of the independence and autonomy of investigators. The article explains the necessity of removing the investigative bodies of the Republic of Armenia from the departmental authority in the light of the decisions of the European Court of Human Rights.